

ԼՂ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԵԴ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԵՐԸ

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՂ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԵԴ ԳՈՐԾԻՔԱՎԱԶՄԵՐԸ	2
1. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ)	2
2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՆ՝ ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՍՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ	6
3. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՊԱՌՈՒՄԸ	10
4. ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԸ	17
5. ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	20
6. ԻՆՉՊԻՄԻ ՔԱՅԼԵՐ Է ՊԵՏՔ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ	25
7. ՊԵՏՔ Է Ի ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ	40
8. ԼՐԱՅՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	43

ԼՂ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԵԴ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԵՐԸ

1. ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ)

2022 թվականի դեկտեմբերին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի լիակատար շրջափակումը, ապա՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունները և ռազմական ագրեսիան հանգեցրին խաղաղ բնակչության գրեթե ամբողջական բռնի տեղահանման, պատճառ հանդիսացան անձանց իրավունքների զանգվածային խախտումների և ոչ իրավաչափ սահմանափակումների համար:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց գերակշիռ մասը կորցրել են բնակարաններ, առանձնատներ, գյուղատնտեսական և արտադրական նշանակության հողեր, գործարաններ, արտադրամասեր և այլ սեփականության օբյեկտ հանդիսացող անշարժ գույքեր, որոնց նկատմամբ սեփականության իրավունքից բխող և ոչ մի իրավագործություն իրականացնելն այս պահի դրությամբ անհնար է:

Սեփականության իրավունքը՝ որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև՝ որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ, ունի

սահմանադրաիրավական կարևոր նշանակություն: Այն ժամանակակից ցանկացած իրավական և ժողովրդավարական երկրում համարվում է անձի հիմնարար իրավունքներից մեկը, ճանաչվում և պաշտպանվում է աշխարհի գրեթե բոլոր երկրների Սահմանադրություններով և օրենսդրությամբ, ամրագրված է միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում:

Սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածով հռչակված հիմնարար իրավունք է:

Սահմանադրության՝ «Սեփականության իրավունքը» վերտառությամբ 60-րդ հոդվածը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) թիվ մեկ արձանագրության 1-ին հոդվածը նույնպես երաշխավորում է սեփականության իրավունքը՝ սահմանելով, որ.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Այսպիսով, սեփականության իրավունքը երաշխավորված է ինչպես ներպետական, այնպես էլ վերպետական մակարդակով և կարող է սահմանափակվել բացառապես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված դեպքերում:

Ներպետական օրենսդրությունը սահմանում է սեփականության իրավունքի երաշխավորման համար անհրաժեշտ իրավակարգավորումներ, որոնց կիրառմամբ Հայաստանի

Հանրապետության տարածքում արդարադատություն իրականացնող դատարանները լուծում են սեփականության իրավունքի կապակցությամբ ծագած վեճերը, այն իրավահարաբերությունները, որոնք ստեղծվել և շարունակվում են սեփականության երաշխավորման հարցի շուրջ:

Միննույն ժամանակ, հարկ է փաստել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող դատարանները չեն կարող վերականգնել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սեփականության իրավունքն այն գույքի մասով, որը գտնվում է Լեռնային Ղարաբաղի տարածքում: Հայաստանի Հանրապետության դատարանները նման իրավագործություն չունեն:

Հետևապես՝ սույն հետազոտության շրջանակներում կներկայացվեն միջազգային իրավական պաշտպանության՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ կամ Դատարան) դիմելու միջոցով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունները, որոնք իրապես կարող են արդյունավետ լինել՝ խախտված սեփականության իրավունքի վերականգնման համատեքստում:

Կոնվենցիայի հիման վրա գործող ՄԻԵԴ-ը, ի ապահովումն Կոնվենցիայի թիվ մեկ արձանագրության 1-ին՝ «Սեփականության պաշտպանություն» վերտառությամբ հողվածի կենսագործման, կարող է քննարկման առարկա դարձնել սեփականության իրավունքի խախտումների վերականգնման հարցը:

✓ ՄԻԵԴ-ը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են Կոնվենցիայով կամ նրան կից արձանագրություններով

ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման գոի:

✓ Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:

2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴՍԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՆ՝ ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈՒ

ՄԻԵԴ-ը, քննարկման առարկա դարձնելով սեփականության իրավունքի վերականգնման հնարավորության հարցը¹, 2015 թվականի հունիսի 16-ին Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի գործով² արձանագրել է Կոնվենցիայի թիվ մեկ արձանագրության 1-ին հոդվածով սահմանված՝ սեփականության իրավունքի **շարունակական խախտում**:

Տվյալ գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Մինաս Սարգսյանն իր ընտանիքի հետ բնակվել է Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղում, որտեղից 1992 թվականին հարկադրաբար տեղահանվել է: Գյուլիստանում Մինաս Սարգսյանն ունեցել է 167 քառ. մետր ընդհանուր մակերեսով երկհարկանի բնակելի տուն և օժանդակ շինություններ, ինչպես նաև 2160 քառ. մետր հողատարածք:

Մինաս Սարգսյանը ՄԻԵԴ ներկայացված դիմումով պնդել է, որ Գյուլիստան գյուղ վերադառնալու, այնտեղ իր գույքին

¹ Տեղահանման ենթարկված անձանց՝ իրենց տան և գույքի նկատմամբ հարգանքի իրավունքի հարցն առաջին անգամ ՄԻԵԴ-ն անդրադարձել է Լոիզիդոն ընդդեմ Ռուբբիայի (գանգատ թիվ՝ 15318/89) Մեծ պալատի 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռով:

² Մեծ պալատ, գանգատ թիվ 40167/06 <https://hudoc.echr.coe.int/eng/?i=001-155662>

մուտք ունենալու կամ գույքի կորստի համար փոխհատուցման իրավունքի մերժումը, ինչպես նաև իր տուն և Գյուլիստանում իր հարազատների գերեզմաններին մուտք ունենալու արգելքը Կոնվենցիայի թիվ մեկ արձանագրության 1-ին հոդվածի և Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շարունակական խախտում է:

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ զգալի կարևորություն ունի տեղահանման ենթարկված անձանց՝ իրենց տուն կամ առավելապես բնակվելու վայր կամավոր և ապահով վերադառնալու իրավունքը՝ տեղահանման պատճառների վերացումից անմիջապես հետո, ինչը համարվում է միջազգային սովորույթային մարդասիրական իրավունքի նորմ, որը տարածվում է բոլոր տարածքների վրա՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք «գրավված», թե «սեփական» տարածքներ են (Միջազգային սովորույթային մարդասիրական իրավունքի վերաբերյալ ԿԽՄԿ-ի ուսումնասիրության 132-րդ կանոն):

ՄԻԵԴ-ը փաստել է նաև, որ ադրբեջանական կառավարությունը նկարագրել է գույքի պաշտպանության և ապօրինի գործողությունների կամ անգործության համար հատուցման ընդհանուր սխեմա, սակայն նրանք չեն կարողացել բացատրել, թե ինչպես կարող են այդ դրույթները կիրառվել հատուկ համատեքստում, երբ Մինաս Մարգսյանը, այն է՝ հայ փախստականը, որը Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում ստիպված էր թողնել իր գույքը և տունը, ցանկանում է պահանջել գույքի ռեստիտուցիա կամ հատուցում՝ դրանից օգտվելու հնարավորությունից զրկվելու համար:

Ամփոփելով՝ ՄԻԵԴ-ը գտել է, որ դիմումատուի համար Գյուլիստանում գտնվող նրա գույքին մուտք ունենալու անհնարինությունը՝ ադրբեջանական կառավարության կողմից Մինաս Սարգսյանի գույքային իրավունքները վերականգնելու կամ այդ իրավունքներից օգտվելու հնարավորության կորստի դիմաց նրան հատուցում տրամադրելու նպատակով, **այլընտրանքային որևէ միջոց չձեռնարկելու պարագայում**, եղել է և շարունակում է անհամաչափ բեռ լինել նրա համար, հետևաբար՝ տեղի է ունեցել թիվ մեկ արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իրավունքի (սեփականության իրավունքի) շարունակական խախտում:

«Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի» գործով որոշվել է Ադրբեջանին պարտավորեցնել 5000 եվրո վճարել նյութական և ոչ նյութական վնասի փոխհատուցման և 30 000 եվրո ծախսերի համար:

Ղարաբաղյան հակամարտության հետևանքով սեփականության իրավունքի խախտում ՄԻԵԴ-ն արձանագրել է նաև Զիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի՝ 2015 թվականի հունիսի 16 -ի վճռով³:

Տվյալ գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Մինչև 1992 թվականի մայիս ամիսը Զիրագովը բնակվել է Լաչինում, այնուհետև՝ տեղափոխվել է Բաքու:

Զիրագովը ՄԻԵԴ ներկայացված դիմումով հայտնել է, որ ունեցել է 1 200 քառ. և 10 000 քառ. մետր մակերեսով հողակտորներ, որոնց համար նա պահանջել է վարձակալության դիմաց ստացվելիք եկամտի գնահատված կորստի հատուցում: Բացի տեխնիկական անձնագրում նկարագրված երկ-

³ Մեծ պալատ, Գանգատ թիվ 13216/05 , [Chiragov and Others v. Armenia | Refworld](#):

հարկանի բնակելի տնից և պահեստից՝ նա ունեցել է նաև գում և երկրորդ պահեստ: Նա պահանջել է շինությունների ամբողջ արժեքի, ինչպես նաև 1992 թվականին իր ընտանիքի թողած կենցաղային իրերի, այդ թվում՝ հինգ ձեռագործ գորգի ամբողջ արժեքի դիմաց փոխհատուցում: 1992 թվականին նրանք ունեցել են 70 պտղատու ծառ, 55 մեղվի փեթակ, 3 ձի, 9 կով, 80 ոչխար, 120 հավ, 60 հնդկահավ և 40 սագ: Նա պահանջել է նաև ծառերի, ձիերի և թռչունների ամբողջ արժեքի, ինչպես նաև մրգի, կարտոֆիլի, մեղրի, հորթերի, կաթի, գառների և բրդի վաճառքից ստացվելիք եկամտի կորստի դիմաց փոխհատուցում: Նա ցանկացել է ստանալ նաև ուսուցչի իր աշխատանքների կորցված աշխատավարձի և Բաքվում իր ընտանիքի ապրուստի հետ կապված ծախսերի փոխհատուցում:

Հիմնական վճռով ՄԻԵԴ-ը որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածների, ինչպես նաև Կոնվենցիային կից թիվ մեկ արձանագրության 1-ին հոդվածի շարունակական խախտում, և որ 14-րդ հոդվածի մասով քննության ենթակա առանձին հարց չի ծագել: Մասնավորապես, Կոնվենցիայի թիվ մեկ արձանագրության 1-ին հոդվածի առնչությամբ ՄԻԵԴ-ը հանգել է եզրակացության, որ որևէ նպատակ չի նշվել, որով կարող էր արդարացվել դիմումատուներին՝ իրենց գույքից օգտվելու հնարավորությունից զրկելը և այդ միջամտության դիմաց որևէ հատուցում չտրամադրելը: ՄԻԵԴ-ը գտել է, որ Հայաստանի Հանրապետությունը պատասխանատու է դիմումատուների իրավունքների խախտման համար (Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի [ՄՊ], թիվ 13216/05, § 201, ՄԻԵԴ 2015):

Արդյունքում ՄԻԵԴ-ը պարտավորեցրել է Հայաստանի

Հանրապետությանը ոչ նյութական և նյութական վնասի դիմաց վճարել 5 000 եվրո (հինգ հազար եվրո) դիմումատուներից յուրաքանչյուրին, իսկ ծախսերի և ծախքերի դիմաց վճարել 28 642.87 ֆունտ ստեռլինգ:

Այսպիսով՝ ՄԻԵԴ Լեոնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում իրավաբանության ուսումնասիրությունն անգամ փաստում է, որ Լեոնային Ղարաբաղում գտնվող և բռնի տեղահանված անձանց սեփականության իրավունքի խախտման դեպքում ՄԻԵԴ դիմելու միջոցով հնարավոր կլինի վերականգնել/փոխհատուցում ստանալ:

3. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՌՈՒՄԸ

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

- ✓ ՄԻԵԴ դիմելու համար, անհրաժեշտ պայման է սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները:
- ✓ Սակայն իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնը, որոշ դեպքերում, կիրառվում է որոշակի ճկունությամբ:
- ✓ Ավելին՝ հատուկ **հանգամանքներ պարունակող** դեպքերում ՄԻԵԴ-ը զարգացրել է այնպիսի իրավաբանություն, երբ անգամ դիմումը ընդունելի է համարվել՝ առանց իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու:

Վերաբերելի նախադեպային իրավունքք

Ակդիվառը և մյուսներն ընդդեմ Թուրքիայի գործով (զանգաստ թիվ 21893/93)⁴ ՄԻԵԴ-ը (Մեծ պալատը) քննարկման առարկա է դարձրել ներպետական պաշտպանության բոլոր միջոցները սպառված լինելու պահանջն այն դեպքում, երբ **հաստատապես փաստվում է, որ նման միջոցների սպառումը ողջամիտ չէ և անարդյունավետ է:**

Ներկայացված գործով պատասխանող թուրքական կառավարությունը նշել է, որ քրդական աշխատավորական կուսակցության (ՔԱԿ) կողմից 1992 թվականին հարձակման հետևանքով գյուղի բնակիչներն ինքնակամ լքել են իրենց տները, քանի որ իրենց զգում էին վտանգի մեջ: Այն բանից հետո, երբ անվտանգության ուժերը դուրս էին եկել գյուղից, ըստ թուրքական կառավարության, ՔԱԿ տեռորիստները մտել էին գյուղ և վառել տները:

- Կառավարությունը հավելել է, որ դիմումատուների՝ դատական պաշտպանության հնարավորություններից չօգտվելը, որը հասանելի է եղել Թուրքիայի հարավարևելքում գործող դատարաններում՝ ՔԱԿ քաղաքականության դրսևրումն է, որը նպատակ է ունեցել բիծ գցել Թուրքիայի և նրա դատական մարմինների վրա, այդպիսով իսկ տեռորիստական ակտը ներկայացնել իրավաչափ լույսի ներքո:

- Միաժամանակ կառավարությունը պնդել է, որ դիմումատուների կողմից դատական պաշտպանության բոլոր միջոցները չսպառելը հետապնդել է քաղաքական նպատակներ, քանի որ Թուրքիայի վարչական դատարանները պատրաստ էին քննել սեփականության իրավունքի

⁴ <https://hudoc.echr.coe.int/?i=001-58152>

դիմաց փոխհատուցում ստանալու վերաբերյալ հայցերը, ըստ այդմ՝ թուրքական կառավարությունը նշել էր, որ դիմումատուների դիրքորոշումն այն մասին, թե դատական պաշտպանության իրավունքի իրացումը կարող է առաջացնել հաշվեհարդար տեսնելու վտանգ, անհիմն է և չփաստարկված:

- Ներկայացնելով իր դիրքորոշումը՝ կառավարությունը խնդրել է ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած չլինելու հիմքով ներկայացված դիմումը ճանաչել անթույլատրելի:

✓ *Դիմումատուները, հիշատակելով իրավապաշտպան կազմակերպությունների գեկույցները, պնդել են, որ իրենց տների ոչնչացումը պետության քաղաքականության մասն էր կազմում, որը վերաբերել է մոտ 2.000.000 մարդու և 3.000 բնակելի հատվածների:*

✓ *Երբեմն գյուղերն ամբողջությամբ էին վառում, իսկ բնակիչներին վտարում էին իրենց հայրենի հողերից, քանի որ կասկածում էին ՔԱԿ անդամներին ապաստան տրամադրելու մեջ:*

✓ *Դիմումատուների պնդմամբ՝ նման քաղաքականությունն ամրապնդվել և իրականացվել է իշխանության բարձր օղակների կողմից, որոնք նպատակ էին հետապնդում տեղի բնակիչների մասսայական տեղահանման ենթարկել, որպիսի պայմաններում տեղի դատական պաշտպանության միջոցները սպառելը դառնում էին պատրանքային, անարդյունավետ և անողջամիտ:*

✓ *Դիմումատուները հավելել են, որ Կառավարությունը չի կարողացել ներկայացնել գեթ մեկ գործ, որտեղ վարչական դատարանները քննարկել են ոստիկանության կողմից*

դիմումատուների տները հրդեհելու վերաբերյալ հայցեր:

✓ *Ընդ որում՝ կառավորությունը չի ներկայացրել որևէ դատական ակտ՝ փոխհատուցում տրամադրելու կամ գյուղի տները դիտավորությամբ ոչնչացնելու մեջ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարելու մասին:*

ՄԻԵԴ-ը գտել է, որ դիմումատուները չեն կարող սկսել դատական գործընթաց և մասնակցել դրան, քանի որ, առաջին հերթին, առաջ կզան նյութական խնդիրներ, և քիչ հավանական է, որ ունեզրկված գյուղացին կարող է վճարել փաստաբանական ծառայությունների համար: Դատարանի կողմից փաստվել է նաև Կառավարության կողմից որևէ փոխհատուցում տրամադրելու դեպքերի բացակայությունը:

Այս համատեքստում ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ համընդհանուր ճանաչում ստացած միջազգային նորմերի համաձայն՝ կարող են լինել հատուկ դեպքեր, որոնք կազատեն դիմումատուներին ներպետական դատական պաշտպանության միջոցները սպառելու հնարավորությունից:

Ներպետական պաշտպանության բոլոր միջոցները սպառելը պարտադիր չէ, եթե ակնհայտ է, որ առկա է Կոնվենցիայի դրույթների հետ անհամատեղելի մշատական խախտումների պրակտիկա և պետությունը նման խախտումների հանդեպ ցուցաբերում է համբերատարություն, ինչի արդյունքում ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը դառնում է անօգուտ և անարդյունավետ:

ՄԻԵԴ-ը կրկնել է, որ ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման արդյունավետ լինելու վերաբերյալ հիմնավորումների բեռը կրում է կառավարությունը, այնուհետև ապացուցման բեռը կրում են դիմումատուները: Նրանք պետք է հիմնավորեն, որ այն միջոցները, որոնց մասին խոսել է կառավարությունը, կամ սպառվել են/օգտագործվել են, կամ կոնկրետ հանգամանքների բերումով այդպիսի հնարավորությունների սպառումը ողջամիտ չէ և անարդյունավետ է, ինչպես նաև առկա են հատուկ հանգամանքներ, որոնք ազատում են դիմումատուներին այդ պարտականությունից:

Նման հանգամանքների շարքին է դասվում ազգային իշխանությունների անգործությունը, երբ պետական պաշտոնյաները կատարում են սխալ կամ անօրինական գործողություններ, օրինակ՝ երբ չեն սկսում հետաքննություն կամ դիմումատուներին չեն տրամադրում որևէ օգնություն: Այս դեպքում կարելի է եզրակացնել, որ ապացուցման բեռը կրկին անցնում է պատասխանող կառավարությանը:

Մինևույն ժամանակ, ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ հայցների կայացնելու դեպքում ցանկալի արդյունք ստանալու կասկածները չեն կարող հիմնավորել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները չսպառելը, սակայն հաշվի է առնում մի ակնհայտ փաստ, որ կառավարությունը, չնայած գյուղերի ոչնչացման մաշտաբների, **այդպես էլ չի կարողացել ՄԻԵԴ-ին ներկայացնել դիմումատուներին փոխհատուցում տրամադրելու որևէ տվյալ:**

Արդյունքում ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ դիմումը/զանգատը չի կարող չընդունվել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած չլինելու հիմքով:

Մույն գործով ՄԻԵԴ-ը, ի թիվս այլնի, արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) և 1-ին արձանագարության 1-ին հոդվածի (սեփականության իրավունք) խախտում:

Մեկ այլ՝ Մակուչանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի և Հունգարիայի (Չորրորդ բաժանմունք) (գանգատ թիվ 17247/13) 2024 թվականի մայիսի 30-ին կայացրած վճռով⁵, պատասխանող կառավարությունը նշել է, որ դիմումատուները չեն սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ նրանք չեն դիմել Սահմանադրական դատարան՝ պահանջելով դիմել նախագահին, խորհրդարան, նախարարների կաբինետ, գերագույն դատարան կամ դատախազություն:

Կառավարությունն ընդունել է, որ ՄԻԵԴ-ը նախկինում վճռել է, որ Սահմանադրական դատարան ներկայացված սահմանադրական բողոքն իրավական պաշտպանության սովորական և արդյունավետ միջոց չէր, որը դիմումատուներից պահանջվում էր օգտագործել Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներով (Իսլամ-Իթիհադ միավորումը և այլք ընդդեմ Ադրբեջանի, գանգատ թիվ 5548/05)⁶, սակայն պնդել է, որ այդ որոշումը պետք է վերանայվի: Կառավարության փաստարկմամբ՝ թեև Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի (գանգատ թիվ 440167/06) գործը ցուցադրել է ադրբեջանահայկական հակամարտության համատեքստում իրավական պաշտպանության միջոցներին մատչելիությանը հատուկ դժվարությունները, չի կարելի անտեսել այն փաստը, որ առկա է եղել Սահմանադրական

⁵ <https://hudoc.echr.coe.int/?i=001-202524>

⁶ <https://hudoc.echr.coe.int/?i=001-147866>

դատարան դիմելու կենսունակ տարբերակ:

✓ Դիմումատուները պնդել են, որ առկա չեն եղել իրենց հասանելի իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոցներ, մասնավորապես՝ հաշվի առնելով իրենց գործով կատարված կոնվենցիոն խախտումների մեջ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց ներգրավվածության և այդ գործողություններին վերջիններիս կողմից աջակցելու վերաբերյալ ապացույցները:

✓ Անդրադառնալով վերոհիշյալ՝ Սարգսյանի ընդդեմ Ադրբեջանի գործին, դիմումատուները պնդել են, որ Ադրբեջանը չի կատարել դիմումատուներին իրավական պաշտպանության այնպիսի միջոցի հասանելիությունն ապացուցելու պարտականությունը, որով կարող էր հատուցում տրամադրվել դիմումատուներին՝ Կոնվենցիայի համաձայն ներկայացված նրանց բողոքների մասով ,և ընձեռվել հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար:

✓ Դիմումատուները նշել են, որ չէր պահանջվում դիմել Ադրբեջանի Սահմանադրական դատարան, քանի որ չէր համարվում, որ դրանով առաջարկվում էր հատուցման եղանակ, որը պատշաճ կերպով հասանելի էր, և այն իրավական պաշտպանության սովորական և արդյունավետ միջոց չէր, որը դիմումատուներից պահանջվում էր օգտագործել Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներով (դիմումատուները մեջբերել էին Իսմայիլովն ընդդեմ Ադրբեջանի գործը, գանգատ թիվ 4439/04)⁷:

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ պատասխանող կառավարությունը չի ներկայացրել այնպիսի գործի օրինակ, որով որևէ

⁷ <https://hudoc.echr.coe.int/?i=001-84461>

կերպ համեմատելի իրավիճակում գտնվող անհատը հա-
ջողությամբ օգտագործել է Սահմանադրական դատարանի
մեխանիզմն այնպես, ինչպես այն առաջարկվել է:

ՄԻԵԴ-ի գնահատմամբ՝ պատասխանող կառավարության
պարտականությունն է ապացուցել, որ իրավական պաշտ-
պանության միջոցները եղել են արդյունավետ, և տվյալ
Ժամանակահատվածում գործնականում հասանելի են եղել
ղիմումատուների համար. այսինքն՝ եղել են մատչելի, և դրա
միջոցով հնարավոր է եղել ղիմումատներուի բողոքների
մասով հատուցում տրամադրել:

Անհրաժեշտ է հավելել, որ սույն գործով ՄԻԵԴ-ի կողմից
արձանագրվել է Ադրբեջանի հայաստյաց վերաբերմունքը,
մասնավորապես՝ ՄԻԵԴ-ը կասկածից վեր է համարել, որ
իրենց գործողություններով Ադրբեջանի տարբեր հաստա-
տություններ և բարձրաստիճան պաշտոնատար անձինք
«հավանության են արժանացրել» և «հովանավորել» են Ռ.Ս.-
ի հանցավոր արարքները:

Ողջ վերոգրյալը վկայում է այն մասին, որ այն պետությու-
նում, որտեղ բարձր մակարդակով ցուցաբերվում է բա-
ցահայտ հայաստյաց վերաբերմունք, դատական պաշտպա-
նության միջոցների սպառումը կարող է պարտադիր և
ողջամիտ չհամարվել՝ ղիմումի ընդունելիության համա-
տեքստում:

4. ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԸ

Կարևոր է արձանագրել, որ սեփականության իրավունքի
վերականգնման կառուցակարգերի ժամանակավրեպ կիրա-
ռումը կարող է չարդարացնել սպասելիքները:

Այս համատեքստում կարևոր ենք համարում ներկայացնել

«Սամադովն ընդդեմ Հայաստանի»⁸ (գանգատ թիվ 36606/08) գործով ՄԻԵԴ դիրքորոշումը, որտեղ դիմումը չափազանց ուշ ներկայացնելը հանգեցրել է դիմումի անընդունելիության:

2021 թվականի հունվարի 26-ին ՄԻԵԴ-ը հրապարակել է «Սամադովն ընդդեմ Հայաստանի» գանգատի վերաբերյալ որոշումը: Դիմումի նախապատույթունը հանգում է հետևյալին.

Դիմումատուն պնդում էր, թե կորցրել է գույքի նկատմամբ վերահսկողությունն ու այն օգտագործելու և դրանից օգտվելու ցանկացած հնարավորություն: Փոխարենը՝ նա իր ընտանիքի հետ ապրել է իրենց՝ որպես ներքին տեղահանման ենթարկված անձանց համար նախատեսված կացարանում:

Գանգատը ներկայացվել է 2008 թվականի հուլիսի 4-ին, այսինքն՝ 2002 թվականի ապրիլի 26-ին Հայաստանի կողմից Կոնվենցիան վավերացնելուց և նույն օրը դրա ուժի մեջ մտնելուց ավելի, քան վեց տարի անց:

Բացի այդ, գանգատը ներկայացնելու պահին Քելբաջարի՝ իր ենթադրյալ գույքից և տնից հարկադիր տեղահանումից հետո անցել է ավելի, քան տասնհինգ տարի: Նախկին բնակավայր վերադառնալու կամ որևէ կերպ իր գույքից ու տնից օգտվելու կամ փոխհատուցում ստանալու նրա անկարողությունը, այդպիսով, անփոփոխ էր մնացել բավականին երկար ժամանակ, որի ընթացքում ներպետական օրենսդրության մակարդակում որևէ միջնորդություն չի ներկայացվել, կամ որևէ վարույթ չի իրականացվել, և հակամարտությանը քաղաքական կարգավորում տալու որևէ

⁸ Գանգատ թիվ 36606/08, երրորդ բաժանմունք <https://hudoc.echr.coe.int/?i=002-13135>

հեռանկար չի եղել:

Ավելին, որևէ այլ նշում չկա այն մասին, որ դիմումատուն ի վիճակի չի եղել ավելի քիչ ուշացումով ներկայացնել իր գանգատը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ 2004-2007 թվականներին Դատարան են ներկայացվել ավելի քան հազար նմանօրինակ գանգատներ:

Այսպիսով, ՄԻԵԴ-ը հայտարարել է գանգատն անընդունելի՝ ժամկետից ուշ ներկայացվելու հիմքով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի:

Այս առումով, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման արդյունքում սեփականության իրավունքի խախտման հարցը ՄԻԵԴ առջև բարձրացնելու համար խիստ կարևոր է դիմումները ժամանակին ներկայացնելը.

Այն պահից, երբ անձինք, որոնց սեփականության իրավունքը խախտվել է և ովքեր ողջամտորեն հնարավորություն են ունեցել իրացնելու իրենց խախտված իրավունքի վերաբերությամբ ՄԻԵԴ դիմում ներկայացնելու իրավունքը, պետք է ձեռնամուխ լինեն նման գանգատ ներկայացնելուն, դրսևորեն նախաձեռնողականություն և ջանասիրություն՝ խուսափելով այդպիսով գազատի ուշ ներկայացնելուց, որը, որպես հետևանք, կարող է խիստ նվազեցնել միջազգային այս կառուցակարգի գործադրմամբ սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ հանգեցնելով դիմումի ընդունելիության մերժման:

5. ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՄԻԵԴ-ում իրականացվող դատավարությունը իր բնույթով մրցակցային է, դիմումատուն պետք է հիմնավորի իր ներկայացրած փաստերը՝ դատարան ներկայացնելով անհրաժեշտ ապացույցներ և իրավական փաստարկներ՝ հիմնավորելով Կոնվենցիայի խախտումները:

Ըստ այդմ՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան գանգատ ներկայացնելու համար անձը դիմումով պետք է հստակ հիմնավորվի, որ Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական գործողությունների

հետևանքով ԼՂ-ից բռնի տեղահանվելու պատճառով Ադրբեջանի Հանրապետության գործողությունները անմիջական ներգործություն են ունեցել իր սեփականության իրավունքի վրա, որի բերումով նա հանդիսացել է Ադրբեջանի Հանրապետության կողմից թույլ տված սեփականության իրավունքի խախտման գոհ:⁹

Համադրելի նախադեպային իրավունքը

Սեփականության իրավունքի պաշտպանության հարցի քննարկման համատեքստում հիշատակման են արժանի Թուրքիայի դեմ կայացված որոշ վճիռներ, որոնցում ՄԻԵԴ-ի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները կարող են վերաբերելի լինել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սեփականության իրավունքի պաշտպանության հարցը քննարկելիս և սեփականության իրավունքի խախտումներն անձի կողմից փաստարկելիս: Ուստի՝ ներքոբերյալ կներկայացվեն այդ գործերի առանձնահատկությունները:

Այսպես՝ Լոյզիդուն ընդդեմ Թուրքիայի (Գանգաստ 15318/89, Մեծ պալատ)¹⁰ գործով ՄԻԵԴ-ը կատարել է հետևյալ կարևոր արձանագրումները.

Հյուսիսային Կիպրոսում թուրքական բանակի մեծաքանակ զորքի առկայությունը և վերջինիս ներգրավվածությունն ակտիվ գործողությունների մեջ

⁹ Այս հարցում անձը, ի թիվս այլնի, կարող է օգտվել մի շարք փաստագրումներից, օրինակ՝ Լաչինի միջանցքի ապօրինի փակման վերաբերյալ ՀՀ ՄԻՊ գեկույցից (<https://ombuds.am/images/files/30582e8c194b68ee2d4dfd561934e053.pdf>), 2023թ. ԼՂ բռնի տեղահանության վերաբերյալ ՄԻՊ գեկույցից (<https://ombuds.am/images/files/e76a3b67b4a56fadfb3271705e33ecec5.pdf>), տարբեր կազմակերպությունների կողմից իրականացրած փաստագրումներից (https://freedomhouse.org/sites/default/files/2024-06/DDF_FH-REPORT_06.2024.pdf):

¹⁰ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-62760>

վկայում են այն մասին, որ թուրքական բանակն ունի արդյունավետ ընդհանուր վերահսկողություն [effective overall control] տվյալ տարածքի նկատմամբ: Սույն գործի հանգամանքներում Թուրքիան պատասխանատվություն է կրում «ՀԿԹՀ»-ն գործողությունների և վարած քաղաքականության համար: Ուստի՝ Կոնվենցիայի թիվ մեկ արձանագրության 1-ին հոդվածի իմաստով՝ դիմումատուին՝ իր գույքից անարգել օգտվելու հնարավորություն չընձեռնելը Թուրքիայի իրավագործության սահմաններում է և վերագրելի է Թուրքիային:

Դիմումատուն պահպանել է հողի նկատմամբ սեփականության իրավունքը, սակայն 1974 թվականից սկսած՝ չի կարողացել տնօրինել, օգտագործել և տիրապետել այն:

Ուստի՝ գույքից անարգել օգտվելու հնարավորություն շարունակաբար չտրամադրելը համարվում է Կոնվենցիայի թիվ մեկ Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի միջամտություն:

Դատարանը, գտնելով, որ **Թուրքական կառավարությունը որևէ կերպ չի հիմնավորել այս միջամտությունը, արձանագրել է, որ սեփականության իրավունքի նման միջամտությունը հիմնավոր չէ:**

Լոյզիդուի վճռով թե՛ իր հիմնավորումը և՛ թե՛ եզրակացությունը համագոր կիրառվում են տեղահանված հույն-կիպրոսցիների նկատմամբ, ովքեր տկն. Լոյզիդուի (Loizidou) նման գրկված են Կիպրոսի հյուսիսային հատվածում գտնվող իրենց սեփականությունից օգտվելու հնարավորությունից (մատչելիությունից) այն սահմանափակումների պատճառով, որոնք «ՀԿԹՀ» իշխանությունները սահմանել են այդ սեփականության ֆիզիկական մատչելիության նկատմամբ:

Իրենց սեփականության մատչելիության շարունակական և լիակատար մերժումը թիվ մեկ Արձանագրության 1-ին հոդվածի առաջին նախադասության իմաստով հստակ միջամտություն է տեղահանված հույն-կիպրոսցիների սեփականության՝ խաղաղ տնօրինման իրավունքի նկատմամբ:

Լոյզուն և այլոք ընդդեմ Թուրքայի¹¹ գործով ՄԻԵԴ-ն ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ **դիմումատուների ներկայացրած փաստաթղթերը հանդիսանում են *prima facie* ապացույց առ այն, որ նրանք խնդրո առարկա գույքի նկատմամբ ունեցել են սեփականության իրավունք:** Քանի որ սա վիճարկելու համար պատասխանող Կառավարությունը չի տրամադրել համոզիչ ապացույցներ, Դատարանը համարում է, որ նշված գույքը թիվ մեկ Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով հանդիսացել է «սեփականություն»: ՄԻԵԴ-ը փաստել է, որ որևէ հիմք չի տեսնում շեղվելու Լոյզիդուն և Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի¹² գործերում իր արած եզրակացություններից եզրահանգել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիային կից թիվ մեկ Արձանագրության 1-ին հոդվածի խախտում այն փաստի ուժով, որ դիմումատուներին մերժվել է իրենց սեփականության մատչելիությունը, տնօրինումը, օգտագործումն ու տիրապետումը, ինչպես նաև մերժվել է իրենց սեփականության իրավունքին միջամտելու համար որևէ փոխհատուցման տրամադրումը:

Նույնական հիմնավորումներով ՄԻԵԴ-ն արձանագրել է սեփականության իրավունքի խախտում նաև Քսենդիս-Արեաստիսն ընդդեմ Թուրքիայի (Գանգատ 46347/99, երրորդ

¹¹ Գանգատ 16682/90, չորրորդ բաժանմունք <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-104835>

¹² <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-50641>

բաժանմունք) գործով¹³:

Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Գանգատ 25781/94, Մեծ պալատ) գործով, չնայած Թուրքիայի կառավարության այն պնդումներին, որ տեղահանված անձանց վերաբնակեցման հարցը պետք է լուծվի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հովանավորությամբ ընթացող բանակցությունների շրջանակներում, այնուամենայնիվ, ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ այդ բանակցություններում զգալի առաջընթաց չի գրանցվել այնպիսի հարցերի քննարկման կապակցությամբ, որոնք վերաբերվում են բնակավայրերում ապրելու ազատությանը, սեփականության իրավունքի խախտման համար փոխհատուցում տրամադրելուն:

Արդյունքում՝ ՄԻԵԴ-ը, հղում անելով Լոյզվիդուն ընդդեմ Թուրքիայի գործով արտահայտած դիրքորոշումներն, արձանագրել է Թուրքիայի կողմից սեփականության իրավունքի խախտում:

¹³ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-98285>

Ողջ վերագրյալի հաշվառմամբ՝ կարող ենք փաստել, որ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման արդյունքում սեփականության իրավունքով իրենց պատկանող,

- գույքը կորցած և/կամ

- այն գույքից անարգել օգտվելու հնարավորություն վերջիններիս զրկված և/կամ

- իրենց սեփականության իրավունքին միջամտելու համար որևէ փոխհատուցման ստացած չլինելու (այդպիսի փոխհատուցումը մերժված լինելու) պարագայում

- բռնի տեղահանված անձինք ՄԻԵԴ ղիմելու միջոցով կարող են վիճարկել իրենց սեփականության իրավունքի խախտումը ու փորձել սեփականության իրավունքի խախտման համար ստանալ փոխհատուցումներ:

6. ԻՆՉՊԻՍԻ ՔԱՅԼԵՐ Է ՊԵՏՔ ԶԵՌՆԱՐԿԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵՆՈՒ ՀԱՄԱՐ

Ստորև կներկայացնենք մի քանի կարևոր քայլեր, որոնք ավելի դյուրին կդարձնեն ՄԻԵԴ ղիմում/զանգատ ներկայացնելու գործընթացը:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանության արդյունքում սեփականության իրավունքի խախտման հանդիպած

բռնի տեղահանված անձն իր սեփականության իրավունքի ենթադրյալ խախտումը ՄԻԵԴ առջև գանգատարկման ընթացքում, կարծես, առաջին խոչընդոտներից մեկին, որին բախվելու է, ներպետական պաշտպանության բոլոր միջոցների սպառելու հարցն է:

Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք իրենց սեփականության իրավունքի խախտումն արձանագրելու նպատակով ՄԻԵԴ դիմելուց առաջ Հայաստանի Հանրապետության տարածքում գործով դատարաններ դիմելու կարիք չպիտի ունենան, քանի որ ՀՀ-ն չէ Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սեփականության իրավունքի խախտում թույլ տված երկիրը և խախտման պատասխանատուն:

Ելնելով դրանից Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք ՀՀ ներպետական միջոցները սպառելու կարիք չպետք է ունենան:

Վերջիններս կա՛մ պետք է սպառեն իրենց գույքի գտնվելու վայրի պետության ներպետական պաշտպանության միջոցները, որը թույլ է տվել իրենց իրավունքների խախտումը, կա՛մ պետք է հիմնավորեն, որ դրանց սպառումն ոչ պատշաճ և անարդյունավետ է՝ այդպիսով իսկ փորձելով հաղթահարել Կոնվենցիայի 35-րդ հոդվածով նախատեսված՝ ներպետական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու պահանջը:

Այս համատեքստում Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձը պետք է փորձի հիմնավորել, որ կոնկրետ դեպքում ինքը բախվում է որոշակի հատուկ հանգամանքների հետ, որոնց պարագայում պետք է ազատվի իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու պարտավորությունից:

Ըստ այդմ՝ անձը պետք է փորձի հստակ կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ ներպետական պաշտպանության բոլոր միջոցները սպառելու կանոնը կիրառելի չէ իր դեպքում, և որ բռնի տեղահանման արդյունքում և դրանից հետո տեղ են գտել Կոնվենցիայի հետ անհամատեղելի ադրբեջանական իշխանությունների կողմից թույլ տրված գործողություններ ներառող վարչական գործելակերպ և նրանց պետական մարմինների կողմից պաշտոնական ամենաթողություն, որոնց հետևանքով ներպետական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը դառնում է անօգուտ և անարդյունավետ:

Այս համատեքստում ԼՂ բռնի տեղահանված անձինք, ում սեփականության իրավունքը խախտվել է կարող են, ի թիվս այլնի, նաև.

ներկայացնել ապացույցներ, հիմնավորումներ, որ իրենց գործով կատարված սեփականության իրավունքի խախտումը պետական քաղաքականության մաս է:

Այս մասով դիմումատուները կարող են փորձել ներկայացնել ապացույցներ իրենց կոնվենցիոն խախտումների մեջ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց ներգրավվածության և/կամ այդ մարմինների կողմից խախտումներ թույլ տալուն աջակցելու մասին:

Դիմողները կարող են նաև ներկայացնել ՀՀ ՄԻՊ, միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցները՝ Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման, ԼՂ բնակչության բռնի տեղահանման մասով, և փորձել ապացուցել, որ իրենց տեղահանումը և/կամ դրանց հետո որոշ դեպքերում (օրինակ՝ Քարին տակ գյուղի) տների (բնակարանների) հիմնահատակ ոչնչացումը պետականորեն կազմակերպված է եղել:

Հղում անելով դատական ակտերի բացակայությանը՝ դիմողները կարող են հիմնավորել, որ փոխհատուցում տրամադրելու կամ սեփականության իրավունքին խախտման (այդ թվում՝ բազմաթիվ տները դիտավորությամբ ոչնչացնելու մեջ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարելու մասին) դատական ակտերը ևս բացակայում են:

Այդ երկրում ԼՂ բռնի տեղահանված էթնիկ հայի կողմից ներպետական պաշտպանության միջոցների սպառման անարդյունավետության հիմնավորման համար իբրև լրացուցիչ իրավական փաստարկ կարող են ծառայել նաև Մակույանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի և Հունգարիայի (Չորրորդ բաժանմունք) (զանգատ թիվ 17247/13) 2024 մայիսի 30-ին կայացրած ՄԻԵԴ վճռով տեղ գտած արձանագրումները, որով ընդգծվել է, որ Ադրբեջանի իշխանությունների կողմից թույլ է տրվել կյանքի իրավունքի խախտում՝ ազգությամբ հայ լինելու հիմքով խտրականության հետ համակցությամբ, ինչը դրսևորվել է պետական տարբեր մարմինների ու պաշտոնատար անձանց հրապարակային և հանրության վրա ուղերձներ պարունակող վարմունքով և արարքներով՝ ազգությամբ հայի էթնիկ շարժառիթներով կատարված սպանության հանցաքննի վերաբերյալ «հավանությունը» և «հովանավորությունը» ցուցադրելով (տե՛ս վճռի §§ 117-118,171,218-221)¹⁴:

¹⁴ Մակույանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի և Հունգարիայի գործով վճռում ՄԻԵԴ կողմից է արձանագրվել էթնիկ շարժառիթներով՝ ազգությամբ հայ լինելու շարժառիթով պայմանավորված սպանության հանցագործության Ադրբեջանի Հանրապետության «հավանությունը» և «հովանավորությունը»:

Ընդգծելով, որ Ադրբեջանն այդպիսի գործողություններով՝ նման սպանություն կատարած անձին՝ Ռամիլ Մաֆարովին ներում շնորհելով, պնդելու հրապարակային արարողության ընթացքում նրան առաջխաղացմամբ մայրի կոչում շնորհելով, ութ տարվա համար աշխատավարձի փոխհատուցում և բնակարանի օգտագործման իրավունք տրամադրելու որոշումներով՝ ՄԻԵԴ-ը նշել

Ի լրումն կարելի է նաև նշել, որ Ադրբեջանում ցանկացած դատական գործ հարուցելու հետ կապված առկա են գործնական դժվարություններ, մասնավորապես՝ ՀՀ և ԱՀ միջև սահմանները փակ են, երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները բացակայում են, և էթնիկ հայեր չեն կարող ձեռք բերել վիզաներ (էթնիկ հայերի մուտքը գործնականում արգելված է այդ երկիր): Այս ամենի համակցությամբ փորձել հիմնավորել, որ բռնի տեղահանված անձի համար ստեղծում է «անհաղթահարելի դժվարություններ» իր սեփականության իրավունքը խախտած

էր, որ **հանրությանը կեղվի սխալ ուղերձ** և բացարձակապես անընդունելի կլինի, եթե այդպիսի լուրջ հանցանգործություն կատարած անձը, հետագայում պահպանի պետական պաշտոն գրադեցնելու իրավունքը, ինչը, սակայն, ոչ միայն տեղ էր գտել նշված գործով, այլև անձը նույնիսկ պաշտոնական բարձրացումների էր հասել:

Արդյունքում ՄԻԵԴ-ը վճռում՝ տեղ է գտնում ուղիղ եզրահանգում, որ Ադրբեջանի գործողությունների հետևանքով, ըստ էության, Ռամիլ Սաֆարովի համար ապահովվել է **անպատժելիություն՝ իր՝ հայ զոհերի նկատմամբ կատարված հանցագործության համար** ընդգծելով, որ դա **համատեղելի չէ Ադրբեջանի՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված անհատների կյանքի դեմ հանցագործությունների կատարումը կանխելու համար արդյունավետ գործողությունների ձեռնարկելու պարտավորության հետ:**

Նույն գործով ՄԻԵԴ-ը քննելով այն հարցը, թե, արդյո՞ք, Ռամիլ Սաֆարովի զոհերի **հայկական էթնիկ ծագումը և նրա հանցագործությունների բնույթը** դերակատարում ունեցել են Ադրբեջան նրա վերադարձից հետո, Ադրբեջանի իշխանությունների կողմից ձեռնարված միջոցառումներում, արձանագրել է, որ գործով դիմումատուները, ներկայացնելով բավականաչափ արժանահավատ, հստակ և միմյանց չհակասող ենթադրություններ, առերևույթ համոզիչ ձևով ապացուցելու են, որ Ռ.Ս.-ի առնչությամբ Ադրբեջանի իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումները պայմանավորված են եղել ռասայական շարժառիթով, ուստի՝ ՄԻԵԴ-ը ընդգծել է, որ պատասխանող Կառավարությունն է, ելնելով այդ գործի առանձնահատուկ հանգամանքներից, պարտավոր ապացուցել դիմումատուների կողմից խտրականության մասին փաստարկելի պնդումների շինծու լինելը: Արդյունքում, նշված գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ Ադրբեջանի կառավարությունը չի ապացուցել, դիմումատուների խտրականության վերաբերյալ փաստարկելի պնդումների շինծու լինելու հանգամանքը և արձանագրել, որ Ադրբեջանի կողմից տեղ է գտել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խտրականության արգելքի խախտում՝ 2-րդ հոդվածի՝ կյանքի իրավունքի խախտման հետ համակցությամբ (տե՛ս Մակուչյանը և Մինայանն ընդդեմ Ադրբեջանի և Հունգարիայի (Չորրորդ բաժանմունք) (գանգատ թիվ 17247/13) 2024 մայիսի 30-ին կայացրած վճռի §§ 117-118,171,218-221):

պետության՝ Ադրբեջանի Հանրապետության ներպետական պաշտպանության միջոցների սպառման համար:

2. Հաջորդ խնդիրը, որին հավանաբար կարող է բախվել ԼՂ բռնի տեղահանված անձը, իր սեփականության իրավունքի խախտումը ՄԻԵԴ առջև գազատարկելու հարցում, թույլ տրված իրավունքի խախտման և ՄԻԵԴ դիմում ներկայացնելու միջև առկա հնարավոր ժամանակային խզումն է:

Այս առումով, կրկին պետք է շեշտադրել, որ ՄԻԵԴ դիմում պետք է ներկայացվի առանց ավելորդ հապաղման, և պետք է այս առումով դրսևորել պատշաճ ջանասիրություն ու նախաձեռնողականություն:

Քննարկվող համատեքստում, եթե անցել է որոշակի տևական ժամանակ, ԼՂ բռնի տեղահանված անձը, կարող է փորձել հիմնավորել այդ հանգամանքը, նրանով, որ

իր սեփականության իրավունքի խախտումը կրում է շարունակական բնույթ, որ իր գույքին մուտք ունենալու, այն վերահսկելու, օգտագործելու և դրանից օգտվելու, կամ դրա կորստի համար հատուցում ստանալու իրավունքը խախտվում է անընդհատ՝ ամենօրյա տևողությամբ: Հետևապես՝ հիմնվելով այս առումով ՄԻԵԴ զարգացրած իրավաբանության վրա, պետք է փորձել հիմնավորել, որ տեղի չի ունեցել մեկանգամյա ակտ, որով խախտվել է իրավունքը, հետևաբար՝ չի անցել խախտում թույլ տալու պահից ՄԻԵԴ դիմելու 4-ամսյա ժամկետը (երբ բացակայում են ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները):

Պ Ե Տ Ք Է Ը Ն Դ Գ Ծ Ե Լ ,

ՄԻԵԴ իրավաբանությունն այնպիսին է, որ դիմումատուն ինքը պետք է ընթացք տա իր գործին, որ անփոփոխ

իրավիճակում անգործությունն ցուցաբերելը մի որոշ ժամանակ հետո կարող է դատարանի կողմից արդարացված չհամարվել:

Ըստ այդմ՝ անգամ շարունակական բնույթի խախտման դեպքում այն պահից, երբ դիմումատուին հայտնի է դարձել կամ կարող էր հայտնի դարձած լինել, որ չկա կանխատեսելի ապագայում իր գույքից և տնից օգտվելու հնարավորությունը վերականգնելու որևէ իրական հույս, ՄԻԵԴ դիմումն առանց բացատրության կամ անհարկի ուշ ներկայացնելը կարող է հանգեցնել դրա ընդունումը մերժելուն՝ ժամկետից ուշ ներկայացվելու հիմքով (տե՛ս Չիրագովը և այլք [ՄՊ], գանգատ թիվ 13216/05, § 140-141, 14/12/11 կայացրած որոշումը):

Բացի այդ, դիմումի որոշակի ժամանակային խզմամբ ներկայացնելը կարելի է փորձել հիմնավորել, որ բռնի տեղահանումից գրեթե անմիջապես հետո Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև սկսել են խաղաղության բանակցություններ, որոնց ընթացքի և արդյունքների մասին, խիստ սակավ տեղեկատվություն է հրապարակայնացվել:

Արդյունքում, փորձել հիմնավորել, որ այդ ժամանա-

կահատվածում դեռևս ԼՂ բռնի տեղահանված անձն ունեցել է ողջամիտ ակնկալիք, թե այդ բանակցությունների արդյունքում հնարավոր է վերացվի իր սեփականության իրավունքի շարունակական խախտումը՝ վերացվեն իր գույքին մուտք ունենալու, այն վերահսկելու, օգտագործելու և դրանից օգտվելու խոչընդոտները:

Այդ մասով, ժամանակային գործոնով պայմանավորված՝ դիմումի ընդունելիության համար ընդունելի փաստաթղթերի մասով խիստ կարևոր է Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի [ՄՊ] գործով (գանգատ թիվ 40167/06) ՄԻԵԴ 14.12.2011թ. կայացրած որոշման մեջ արտահայտված դիրքորոշումները հաշվի առնելը (տե՛ս §90, 136-148), որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նաև սույն դեպքում:

3. ՄԻԵԴ դիմումի հիմնավորվածության տեսանկյունից անհրաժեշտ է դատարանին ներկայացնել Լեռնային Ղարաբաղում գտնվող և սեփականության իրավունքով բռնի տեղահանվածին պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող ապացույցներ՝ հիմնավորելով սեփականության իրավունքի խախտումը:

Այս առումով ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով սահմանվել է ճկուն մոտեցում այն դիմումատուների կողմից ներկայացվելիք ապացույցների նկատմամբ, որոնք պնդում են, որ կորցրել են իրենց գույքը և տունը միջազգային կամ ներքին զինված հակամարտությունների իրավիճակներում:

Սակայն, եթե դիմումատուն գույքի կամ կացարանի նկատմամբ իր իրավունքի մասին վկայող որևէ ապացույց չի ներկայացնում, ապա նրա դիմումը, ամենայն հավանականությամբ, չի բավարարվի (տե՛ս, օրինակ՝ Լորդոսը և այլք ընդդեմ Թուրքիայի, գանգատ թիվ 15973/90,

§ 50, 2010 թվականի նոյեմբերի 2)¹⁵, երբ ՄԻԵԴ-ը բողոքը համարեց *ratione materiae* (առարկայական առումով) անհամատեղելի՝ հաշվի առնելով սեփականության իրավունքի մասին վկայող ապացույցի բացակայությունը):

Մի քանի գործերով ՄԻԵԴ-ը կրկին շեշտել է, որ դիմումատուները պետք է իրենց բողոքները հիմնավորելու նպատակով բավարար առերևույթ ապացույցներ ներկայացնեն:

Օրինակ՝ Դամասն ընդդեմ Ռուսաստանի (զանգատ թիվ 36150/04, §§ 108-111, 2012 թվականի մայիսի 29)¹⁶ գործով ՄԻԵԴ-ը գտավ, որ դիմումատուի տան ավերման կապակցությամբ բողոք ներկայացնելիս պետք է տրամադրի խնդրո առարկա գույքի առնվազն համառոտ նկարագրությունը: Քանի որ փաստաթղթեր կամ մանրամասն շարադրված պահանջներ չէին ներկայացվել, նրա բողոքը համարվել էր անհիմն:

Կ Ա Ր Ե Վ Ո Ր Է Ի Մ Ա Ն Ա Լ

Որպես գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կամ այնտեղ բնակվելու մասին վկայող առերևույթ ապացույցի օրինակ է ՄԻԵԴ-ը դիտարկել այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են օրինակ՝

- հողի կամ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը,
- հողային կամ հարկային ռեգիստրներից քաղվածքները,
- տեղական վարչական մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերը,
- հատակագծերը,

¹⁵ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-108498>

¹⁶ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-110944>

- լուսանկարները,
- սպասարկման համար վճարված գումարների անդորրագրերը, ինչպես նաև
- փոստային առաքումների վերաբերյալ ապացույցները,
- վկաների հայտարարությունները կամ
- որևէ այլ վերաբերելի ապացույց (տե՛ս, օրինակ՝ Պրոկուրորիչն ընդդեմ Ռուսաստանի գանգատ թիվ 58255/00, § 37).

Ի լրումն՝ կարելի է ներկայացնել նաև բնակելի տան լուսանկարները, ինչպես նաև անձանց, հնարավոր վկաների հայտարարությունները Ձեր անշարժ գույքի, դրա մանրամասնությունների (օրինակ՝ ներկայացնել սենյակների թվի և նրա հողակտորի չափսի առնչությամբ):

Դիմումի հիմնավորվածության համատեքստում անհրաժեշտ կլինի հստակ մանրամասնել, թե ինչպե՞ս է ձեռքբերվել անշարժ գույքը, անցել է այն ժառանգությամբ, ստացվել իբրև նվիրատվություն, առուվաճառքի արդյունքում, թե կառուցվել է դիմողի կողմից՝ ներկայացնելով համապատասխան ապացույցներ՝ ժառանգության վկայական, առուվաճառքի, նվիրատվության պայմանագիր կամ, օրինակ, հարևանների և ընկերների հայտարարություններն ու վկայությունները, որ օրինակ, իրենց օգնությամբ և ընտանիքի մի շարք անդամների հետ մյասին կառուցվել է դիմումատուին պատկանող անշարժ գույքը:

Եթե սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի բնօրինակները բացակայում են, ապա անհրաժեշտ է հիմնավորել, թե ինչու դիմումատուն չի կարող ներկայացնել դրանք, օրինակ, հիմնավորելով, որ ԼՂ բռնի տեղահանված անձը հարկադրված էր մեծ

շտապողականությամբ հեռանալ իր բնակատեղից, որտեղ պահվում էին փաստաթղթերը, իսկ հետագայում չէր կարողացել վերադառնալ այնտեղ կամ որևէ այլ կերպ հետ ստանալ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը:

Ուշադրության է արժանի նաև ՄԻԵԴ այս համատեքստում զարգացրած նախադեպային իրավունքը.

Դոդանը և այլք ընդդեմ Թուրքիայի (գանգատ թիվ 8803-8811/02, թիվ 8813/02 և թիվ 8815-8819/02, ՄԻԵԴ 2004-VI)¹⁷ գործում, որը վերաբերում էր Թուրքիայի հարավ-արևելքում արտակարգ դրության մեջ գտնվող շրջանի գյուղացիների հարկադրաբար վտարմանը և մի քանի տարի շարունակ նրանց վերադառնալ թույլ չտալուն, պատասխանող Կառավարությունն առարկություն էր ներկայացրել առ այն, որ դիմումատուներից ոմանք սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր չեն ներկայացրել՝ հաստատելու համար, որ իրենք տվյալ գյուղում գույք են ունեցել:

Դատարանը, սակայն, համարել էր, որ անհրաժեշտություն չկա որոշելու, թե, արդյո՞ք, սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի բացակայության պայմաններում դիմումատուները, ներպետական իրավունքի համաձայն, սեփականության իրավունք ունեցել են, թե՛ ոչ: Փոխարենը, հարցը կայանում էր նրանում, թե, արդյո՞ք, դիմումատուների կողմից իրականացված ընդհանուր տնտեսական գործունեության արդյունքում ստեղծվել է «գույք»՝ թիվ մեկ արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Հարցին դրական պատասխան տալով՝ ՄԻԵԴ-ը այս համատեքստում նշել է, որ «(...անվիճելի է, որ բոլոր դիմումատուները մինչև 1994 թվականն ապրել են Բոյդաս

¹⁷ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-76309>

գյուղում: Թեև նրանք գրանցված գույք չեն ունեցել, սակայն կա՛մ ունեցել են իրենց նախնիների հողի վրա կառուցված սեփական բնակելի տներ, կա՛մ ապրել են իրենց հայրերի սեփականությունը համարվող բնակելի տներում և մշակել են վերջիններիս պատկանող հողը: Դատարանն ապա նշում է, որ դիմումատուներն անվիճարկելի իրավունքներ են ունեցել գյուղի ընդհանուր հողերի, ինչպես օրինակ, արոտավայրերի, անասունների արածելու վայրերի և անտառային հողերի նկատմամբ, և որ նրանք իրենց ապրուստը վաստակել են անասնապահությամբ և ծառահատմամբ զբաղվելու միջոցով: Հետևաբար՝ Դատարանի կարծիքով, տնտեսական այս բոլոր ռեսուրսները և դիմումատուների կողմից դրանցից ստացված եկամուտը կարող են որակվել որպես «գույք»՝ 1-ին հողվածի նպատակներով»:

Ավելին՝ Օներիլիդիզն ընդդեմ Թուրքիայի (գանգատ թիվ 48939/99, § 124, ՄԻԵԴ 2004-XII)¹⁸ գործում այն ամփոփվել է հետևյալ կերպ.

«Գույք» հասկացությունը չի սահմանափակվում «գոյություն ունեցող գույքով», այլ կարող է իր մեջ ներառել նաև ակտիվներ, ներառյալ՝ պահանջները, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է պնդել, որ ունի գույքային իրավունքից արդյունավետորեն օգտվելու հնարավորություն ձեռք բերելու առնվազն ողջամիտ և «օրինական ակնկալիք»(...):»:

Այդ գործով ՄԻԵԴ-ը համարել է, որ աղբափոսի կողքին հանրային հողի վրա ապօրինաբար կառուցված կացարանը, որտեղ դիմումատուն ու իր ընտանիքն ապրել են առանց որևէ խնդրի, թեև թույլտվության բացակայության պայմաններում, վճարելով տեղական հարկերը և կատարելով հան-

¹⁸ <https://hudoc.echr.coe.int/eng/?i=001-67614>

րային ծառայությունների դիմաց վճարումները, գույքային շահ է եղել, որը, de facto, ճանաչվել էր իշխանությունների կողմից, և որի բնույթը բավարար էր, որպեսզի այն ԹԻՎ մեկ արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույք համարվեր:

Բացի այդ, անհրաժեշտ է նաև ներկայացնել մինչ Ադրբեջանի կողմից իրականացված ռազմական ագրեսիան տեղի ունեցած իրադարձությունների (օրինակ՝ Մարսանգի ջրամբարի նվազման հետևանքով խմելու ջրի սակավությունը, Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով պարենային առաջին անհրաժեշտության ապրանքների բացակայության) և ռազմական ագրեսիայի համակցության հստակ պատճառահետևանքային կապը՝ դիմողի կողմից իր գույքին մուտք ունենալու, այն վերահսկելու, օգտագործելու և դրանից օգտվելու հանգամանքի հետ՝ հիմնավորելով, որ խնդրո առարկա անձինք ոչ թե կամավոր են դուրս եկել, այլ այս համակցության մեջ փախել են Հայաստան՝ իրենց մշտական բնակավայրերից կյանքը կորցնելու վախով և հետագա բնակվելու անհնարինությամբ պայմանավորված:

Դիմողն այս համատեքստում կարող է ընդգծել, որ ենթադրյալ խախտում թույլ տված պետության՝ Արդրբեջանի Հանրապետության կառավարությունը որևէ քայլ չի ձեռնարկել, որը պարտավոր էր ձեռնարկել դիմողի գույքային իրավունքները պաշտպանելու կամ վերականգնելու համար, ինչպես նաև չի գործել ներքին տեղահանման ենթարկված անձանց և փախստականների համար տան և գույքի ռեստիտուցիայի վերաբերյալ միջազգային չափանիշներին համապատասխան:

Այս մասով Դիմողը կարող է մատնանշել «Փախստականների և տեղահանման ենթարկված անձանց գույքային

հարցերի կարգավորումը» Եվրոպայի խորհրդի Խորհրդա-
րանական վեհաժողովի թիվ 1708 (2010) բանաձևը, որով
հիմնվելով համապատասխան միջազգային չափանիշների
վրա, անդամ պետություններին կոչ է արվում
«երաշխավորել փախստականների և ներքին տեղահանման
ենթարկված անձանց կողմից լքված տուն, հող և գույքին
մուտք ունենալու հնարավորության և դրանց նկատմամբ
իրավունքների կորստի համար ժամանակին և
արդյունավետ փոխհատուցում՝ հաշվի չառնելով զինված
հակամարտությունների կարգավորմանը կամ որոշակի
տարածքի կարգավիճակին վերաբերող չավարտված
բանակցությունները»:

Այս լույսի ներքո դիմողը կարող է ներկայացնել հիմնա-
վորումներ և ապացույցներ առ այն, որ իր գույքին մուտք
ունենալու, այն վերահսկելու, օգտագործելու և դրանից
օգտվելու, կամ դրա կորստի համար հատուցում ստանալու
իրավունքի մերժմամբ Ադրբեջանի կողմից շարունակաբար
խախտվում է Կոնվենցիայի թիվ մեկ արձանագրության 1-ին
հոդվածը:

Բացի այդ, պետք է հիմնավորել, որ գույքը գտնվում է
Ադրբեջանի տիրապետման և հսկողության գոտում: Տա-
րածքային իրավագրության կանխավարկածի վերաբերյալ
նախադեպային իրավունքի համապատասխան սկզբունք-
ները ՄԻԵԴ-ը սահմանել է Ասսանիձեն ընդդեմ Վրաստանի
[Մեծ պալատ]¹⁹, գանգատ թիվ 71503/01, 2004), հետագայում՝
Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի [ՄՊ]
գանգատ թիվ 48787/99, §§ 331 և 333, ՄԻԵԴ 2004 -VII)20
գործով, որտեղ արձանագրել է, որ պետությունները պետք է

¹⁹ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-61875>

²⁰ <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-61886>

պատասխանատվություն կրեն իրենց «իրավագործության» ներքո գտնվող անձանց նկատմամբ կատարված՝ Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքների և ազատությունների որևէ խախտման համար: Իրավագործության իրականացումն անհրաժեշտ պայման է, որպեսզի հնարավոր լինի Կոնվենցիայում սահմանված իրավունքների և ազատությունների խախտման մասին ենթադրությունների հիմքում ընկած՝ իրեն վերագրվող գործողությունների կամ անգործության համար Պայմանավորվող պետությանը ենթարկել պատասխանատվության:

Անհրաժեշտ է, որպեսզի ՄԻԵԴ-ը տեղեկացվի Ադրբեջանի կողմից որևէ փոխհատուցում չտրամադրելու և հարցի լուծման կապակցությամբ որևէ գործընթաց չսկսելու մասին: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը հանգում է հետևյալին. փոխհատուցումը պետք է լինի ռեստիտուցիայի ձևով՝ իրենց գույքի նկատմամբ փախստականների և տեղահանման ենթարկված անձանց օրինական իրավունքների հաստատման և այդ գույքին ապահով ֆիզիկական մուտք ունենալու և այն տիրապետելու հնարավորության վերականգնման միջոցով: Այն դեպքում, երբ ռեստիտուցիան հնարավոր չէ, պետք է ապահովվի համապատասխան հատուցում՝ գույքի նկատմամբ նախկին օրինական իրավունքների հաստատման և դրանց շուկայական արժեքին ողջամտորեն համապատասխանող դրամական միջոցների և ապրանքների տրամադրման կամ արդարացի փոխհատուցման այլ ձևերի միջոցով:

7. ՊԵՏՔ Է ԻՆԿՄՍԻ ՈՒՆԵՆԱԼ

Դատարանի պաշտոնական լեզուներն են անգլերենը և ֆրանսերենը, սակայն, ցանկության դեպքում, գանգատը/դիմումը կարող է ուղարկվել Կոնվենցիան վավերացրած երկրներից ցանկացած մեկի պետական լեզվով: Գործի քննության նախնական փուլում ՄԻԵԴ-ն իր նամակագրությունը կարող է վարել այդ լեզվով: Սակայն պետք է նկատի ունենալ, որ դատավարության հետագա փուլում՝ մասնավորապես, եթե ՄԻԵԴ-ը որոշի Կառավարությունից պահանջել Ձեր գանգատների վերաբերյալ ներկայացնել գրավոր առարկություններ, ապա Դատարանի կողմից դիմումատուին ուղարկվող հաղորդագրությունները լինելու են միայն անգլերեն կամ ֆրանսերեն լեզուներով, իսկ դիմումատուից կամ ներկայացուցչից պահանջվելու է հետագա նամակագրությունը վարել անգլերենով կամ ֆրանսերենով:

Որպեսզի ՄԻԵԴ-ը քննության առնի ներկայացված դիմումը, պետք է ձևաթղթի բոլոր համապատասխան բաժինները լրացնել՝ ըստ տրված ցուցումների, և կցել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ համաձայն ՄԻԵԴ-ի կանոնակարգի 47-րդ հոդվածի: Դիմումի ձևաթուղթը լրացնելիս և հիմնավորող փաստաթղթերը կցելիս՝ անպայման հաշվի առել վերոնշյալը: Այս պահանջը չբավարարելու դեպքում ներկայացված դիմումը ՄԻԵԴ-ի կողմից չի քննվի, դրա հիման վրա վարույթ չի հարուցվի, իսկ ուղարկված փաստաթղթերը կոչնչացվեն:

ՄԻԵԴ-ի իրավասության շրջանակը սահմանված է Կոնվենցիայում շարադրված ընդունելիության պայմաններով, որոնցով էլ որոշվում է, թե ով, երբ և ինչ հարցի կապակցությամբ կարող է ՄԻԵԴ դիմել: ՄԻԵԴ-ի կողմից

քննվող գործերի ավելի քան 90%-ը հայտարարվում է անընդունելի: Հետևաբար՝ պետք է համոզվել, որ գանգատները/դիմումները համապատասխանում են ստորև շարադրված ընդունելիության պահանջներին²¹.

Դատարանը քննության չի ընդունում ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝

ա. անանուն է կամ,

բ. ըստ էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:

Դատարանն անընդունելի է համարում ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ այն անհամատեղելի է Կոնվենցիայի կամ նրան կից արձանագրությունների դրույթների հետ կամ ակնհայտորեն անհիմն է կամ հանդիսանում է գանգատ ներկայացնելու իրավունքի շարաշահում²²:

Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, որ՝

ա. դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին,

բ. վեճն արդեն կարգավորվել է,
գ. Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պատճառով գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ:

Այդուհանդերձ, Դատարանը շարունակում է գանգատի քննությունը, եթե դա է պահանջում Կոնվենցիայով և նրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների

²¹ Ծանոթագրություն՝ դիմումի ձևաթուղթը լրացնելու մասին՝ <https://rilm.am/wp-content/uploads/2022/07/6628180a764e4b55ba63b0cf840e6546.pdf>

²² Կոնվենցիա, հոդված 35

հարգումը²³:

Վավեր դիմում ներկայացնելու պահանջները շարադրված են ՄԻԵԴ-ի կանոնակարգի 47-րդ հոդվածում, իսկ հավելյալ տեղեկություններ կարող եք գտնել Կանոնակարգին կից և Դատարանի ինտերնետային կայքում տեղադրված «Դիմումի ներկայացումը Դատարան» գործնական ուղեցույցում²⁴, ինչպես նաև ՄԻԵԴ-ի կողմից հրապարակված՝ (HYE) ECHR - Դատարան դիմում ներկայացնելու ճիշտ կարգը (Armenian Version) տեսագրությունում²⁵:

Դիմում-ձևաթուղթի պաշտոնական օրինակը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝ <https://rilm.am/wp-content/uploads/2022/07/b3f37328e55e2bb810e2a340f5e7f1c2-1.pdf> :

ՄԻԵԴ դիմում/զանգաստ ներկայացնելու կարգի մասին հավելյալ տեղեկատվություն կարող եք գտնել միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի պաշտոնական կայքէջից՝ https://rilm.am/brief/#library_block4 հղմամբ:

Մեր կողմից թիվ 150/48318-2024 դիմումում բարձրացված հարցադրումներին ի պատասխան՝ 2024 թվականի օգոստոսի 8-ին Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակից հայտնել են, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից ի վեր, Ադրբեյջանի կողմից թույլ տրված մարդու իրավունքների խախտումների առնչությամբ 2021 թվականի փետրվարի 1-ին և 2022 թվականի հուլիսի 27-ին Հայաստանի Հանրապետությունը ընդդեմ Ադրբեյջանի ՄԻԵԴ է ներկայացրել 2 միջպետական զանգաստ, որտեղ, ի

²³ Կոնվենցիա, հոդված 37

²⁴ <http://www.echr.coe.int/applicants>

²⁵ <https://www.youtube.com/watch?v=q-Wd6SDFe2Y>

թիվս այլնի, ներառված է նաև Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներից տեղահանված անձանց գույքային իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը: Առաջին գանգատն արդեն կոմունիկացվել է կողմերին և գտնվում է գանգատի ընդունելիության քննության փուլում: Վերոնշյալ գանգատների վերաբերյալ Եվրոպական դատարանի կողմից դեռևս որևէ որոշում չի կայացվել:

8. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

- Կից հղումներով ներկայացվում են ՀՀ ՄԻՊ զեկույցները՝
 - Լաչինի միջանցքի փակման վերաբերյալ՝
 - <https://ombuds.am/images/files/30582e8c194b68ee2d4fdf561934e053.pdf> :
 - Բռնի տեղահանության վերաբերյալ՝
 - <https://ombuds.am/images/files/e76a3b67b4a56fadbb3271705e33eeec5.pdf> :
 - Հասարակական կազմակերպությունների կողմից իրականացրած փաստագրումը՝
 - https://freedomhouse.org/sites/default/files/2024-06/DDF_FH-REPORT_06.2024.pdf :
 - Տեսանյութ՝ թե ինչպես են ահաբեկում Խրամորթի բնակիչներին՝
 - Ադրբեջանցիները 3 օր է բարձրախոսներով «կոչ են անում» խրամորթցիներին լքել գյուղը (youtube.com):